177. Գյուղի մեծ աղբյուրի ամ կողմի պատին

ԺԳ դար

Հրատարակված է՝ Քաջ 630

1 *Քս Ա.Ծ՝ ողորմի Մխիթար*
2 *քահանայի ճ՝ սպ՝ եւ յաւազանս*
3 *Զդ թվիս հ. կս*

Մանրություն.— *Մխիթար քահանան 100 սպիտակ է տվել ավազանին։ Նկատի ունենալով ժամանակը, կարելի է ենթադրել, որ նվիրատվությունը շինության առթիվ է եղել։*

Տարընթերցում.— ճ՝ սպ՝ եւ *(100 սպիտակ ավեց)* Քաջ *կարդացել է* ճարտարապետ, *որով ստացվել է, որ աղբյուրը կամ ավազանը կառուցել է Մխիթար քահանա ճարտարապետը։*

Այս արձանագրության մեջ երևում է, որ աղբյուր *բառը որոշակիորեն տարբերել են* ավազան *բառից։* Աղբյուր *ասելով հասկացել են ամբողջը, սկսած ակունքից մինչև գյուղում կառուցված աղբյուրի շինությունը, ներառյալ նաև ջրատար խողովակները, իսկ* ավազանը *միայն աղբյուրի համար գյուղում շինած շենքն էր։*

178. Սանահնի կամուրջի մոտ, խաչքարի վրա

(Լուս. № 97)

ԺԲ դարի 90-ական թվականներ, 1192-ից հետո

Հրատարակված է՝ Ջալ 38, Քաջ 631, Հար 309, Հայապատում 472, Վիմ 41, Մով 72—73, Հ. Օրբելի (ХВ, вып. IV, 1915 г.), Ն. Մառ (ХВ, т. IV, вып. II), Ուղ. 41

1 *... (ա)զգին բա-*
2 *գրատունեաց։ Եւ՝ Վան-*
3 *ենի, դուստր իշխանաց իշ-*
4 *խանն Սարգսի, որդւոյ Զաքար-*
5 *էի, կին Աբասա թագաւորի,*
6 *որ կիսաւրե վախճանեալ խա-*
7 *ւարեցոյց զմեզ, շինե-*
8 *ցի զկամուրջս եւ կանգնե-*
9 *ցի զխաչս յիշատակ*
10 *նմա եւ մխիթար ինձ եւ ի կե-*
11 *անս ծնողաց եւ եղբարց*
12 *իմոց Յիշեցէք ի Քս Յս։*

Մանրություն.— *1. Տողերի համարակալումը պայմանական է, սկզբում, հաւանաբար, մի տող ևս է եղել։*

2. Արձանագրության գլուխը կտրել և խաչքարը տեղից վայր են գցել Աղա Մամեդ խանի զորքերը 1795 թվականին։ Այդ մասին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցը Սանահնի քոթուկի մեջ հետևյալն է գրել.